Երկրորդ ընթերցում
լրամշակված նախագիծ

Կ-225-04.04.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ *ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 71-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետում «Սույն կետով սահմանված ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «(մասնակի վճարման դեպքում՝ մասնակի վճարված ԱԱՀ-ի գումարները)» բառերը,

2) 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա. ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե ԱԱՀ-ի գումարները վճարվել են մինչև մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ,»,

3) 2-րդ կետը լրացնել «ա.1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ա.1. ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման և ԱԱՀ-ի գումարների վճարման օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով.»:

Հոդված 2. Օրենսգրքի 78-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասում «ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված դեպքի,» բառերը,

2) լրացնել 5.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման համար սահմանված ժամկետներում՝ նույն հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ առանց հարկը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանի, որի վերաբերյալ մաքսային մարմինը ընդունում է ԱԱՀ-ի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշում: ԱԱՀ-ի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն մասին համապատասխան հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունից օգտվելու համար մաքսային մարմնի կողմից գանձվում են տոկոսներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 92-րդ հոդվածում՝

1) 1-ի մասի 2-րդ կետում «Սույն կետով սահմանված ակցիզային հարկի գումարները» բառերից հետո լրացնել «(մասնակի վճարման դեպքում՝ մասնակի վճարված ակցիզային հարկի գումարները)» բառերը,

2) 2-րդ կետի «ա» ենթակետում «հաշվարկով» բառից հետո լրացնել «, եթե ակցիզային հարկի գումարները վճարվել են մինչև մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ» բառերը,

3) 2-րդ կետը լրացնել «ա.1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ա.1. *հումքի* ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման և ակցիզային հարկի գումարների վճարման օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով.»:

Հոդված 4. Օրենսգրքի 99-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «հարկի գումարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված դեպքի,» բառերը,

2) լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները, որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման համար սահմանված ժամկետներում՝ նույն հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ առանց հարկը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանի, որի վերաբերյալ մաքսային մարմինը ընդունում է ակցիզային հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշում: Ակցիզային հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն մասին համապատասխան հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունից օգտվելու համար մաքսային մարմնի կողմից գանձվում են տոկոսներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:»:

Հոդված 5. *Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում «գումարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հարկային հսկողության արդյունքներով առաջադրված հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող գումարները» բառերով:*

Հոդված *6.* Օրենսգրքի 181-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 2-րդ կետը «բնապահպանական հարկը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի 2.1-ին կետով սահմանված դեպքի,» բառերով,

2) 3-րդ մասում լրացնել 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար

Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկի գումարները, որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման համար սահմանված ժամկետներում՝ նույն հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ առանց հարկը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանի, որի վերաբերյալ մաքսային մարմինն ընդունում է բնապահպանական հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշում: Բնապահպանական հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն մասին համապատասխան հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունից օգտվելու համար մաքսային մարմնի կողմից գանձվում են տոկոսներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:»:

Հոդված 7. *Օրենսգրքի 182-րդ հոդվածում՝*

1) 2-րդ մասում «Կառավարության սահմանած կարգով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի» բառերը,

2) լրացնել 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Բնապահպանական հարկի՝ Օրենսգրքով սահմանված պարտավորությունների չափից ավելի մաքսային մարմիններին վճարված գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված 8. *Օրենսգրքի 196-րդ հոդվածում՝*

1) 1-ին մասում սահմանում է «սահմանում է Կառավարությունը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի» բառերը.

2) լրացնել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ճանապարհային հարկի՝ Օրենսգրքով սահմանված պարտավորությունների չափից ավելի մաքսային մարմիններին վճարված գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և *սույն օրենքի 5-րդ հոդվածը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:* Սույն օրենքի 2-րդ, 4-րդ և *6-րդ* հոդվածների դրույթների կիրարկումն ապահովող որոշումը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-225-04.04.2022-ՏՀ-011/1 ~~*Առաջին ընթերցում*~~

երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ *ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 71-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետում «Սույն կետով սահմանված ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «(մասնակի վճարման դեպքում՝ մասնակի վճարված ԱԱՀ-ի գումարները)» բառերը,

~~2) 2-րդ կետի «ա» ենթակետում «հաշվարկով» բառից հետո լրացնել «, եթե ԱԱՀ-ի գումարները վճարվել են մինչև մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ» բառերը,~~

2) 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա. ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե ԱԱՀ-ի գումարները վճարվել են մինչև մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ,»

3) 2-րդ կետը լրացնել «ա.1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ա.1. ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման և ԱԱՀ-ի գումարների վճարման օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով,»:

Հոդված 2. Օրենսգրքի 78-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասում «ԱԱՀ-ի գումարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված դեպքի,» բառերը,

2) լրացնել 5.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները՝ որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման համար սահմանված ժամկետներում՝ նույն հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ առանց հարկը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանի, որի վերաբերյալ

մաքսային մարմինը ընդունում է ԱԱՀ-ի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշում: ԱԱՀ-ի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն մասին համապատասխան հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունից օգտվելու համար մաքսային մարմնի կողմից գանձվում են տոկոսներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 92-րդ հոդվածում՝

1) 1-ի մասի 2-րդ կետում «Սույն կետով սահմանված ակցիզային հարկի գումարները» բառերից հետո լրացնել «(մասնակի վճարման դեպքում՝ մասնակի վճարված ակցիզային հարկի գումարները)» բառերը,

2) 2-րդ կետի «ա» ենթակետում «հաշվարկով» բառից հետո լրացնել «, եթե ակցիզային հարկի գումարները վճարվել են մինչև մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ» բառերը,

3) 2-րդ կետը լրացնել «ա.1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ա.1. ~~ապրանքների~~ *հումքի* ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման և ակցիզային հարկի գումարների վճարման օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում՝ դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով,»:

Հոդված 4. Օրենսգրքի 99-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «հարկի գումարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված դեպքի,» բառերը,

2) լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարները, որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման համար սահմանված ժամկետներում՝ նույն հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ առանց հարկը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանի, որի վերաբերյալ մաքսային մարմինը ընդունում է ակցիզային հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշում: Ակցիզային հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն մասին համապատասխան հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունից օգտվելու համար մաքսային մարմնի կողմից գանձվում են տոկոսներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:»:

Հոդված 5. *Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում «գումարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հարկային հսկողության արդյունքներով առաջադրված հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող գումարները» բառերով:*

Հոդված ~~5~~6. Օրենսգրքի 181-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 2-րդ կետը «բնապահպանական հարկը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի 2.1-ին կետով սահմանված դեպքի,» բառերով,

2) 3-րդ մասում լրացնել 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված բնապահպանական հարկի գումարները, որպես մաքսային մարմնին վճարվող գումարներ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ մաքսատուրքի վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման համար սահմանված ժամկետներում՝ նույն հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ առանց հարկը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանի, որի վերաբերյալ մաքսային մարմինն ընդունում է բնապահպանական հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշում: Բնապահպանական հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն մասին համապատասխան հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունից օգտվելու համար մաքսային մարմնի կողմից գանձվում են տոկոսներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:»:

***Հոդված 7**. Օրենսգրքի 182-րդ հոդվածում՝*

1) 2-րդ մասում «Կառավարության սահմանած կարգով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի» բառերը,

2) լրացնել 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Բնապահպանական հարկի՝ Օրենսգրքով սահմանված պարտավորությունների չափից ավելի մաքսային մարմիններին վճարված գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»:

***Հոդված 8**. Օրենսգրքի 196-րդ հոդվածում՝*

1) 1-ին մասում սահմանում է «սահմանում է Կառավարությունը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի» բառերը.

2) լրացնել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ճանապարհային հարկի՝ Օրենսգրքով սահմանված պարտավորությունների չափից ավելի մաքսային մարմիններին վճարված գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված ~~6~~9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և ~~կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված ներմուծումների նկատմամբ~~ *սույն օրենքի 5-րդ հոդվածը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա*: Սույն օրենքի 2-րդ, 4-րդ և ~~5-րդ~~ 6-րդ հոդվածների դրույթների կիրարկումն ապահովող որոշումը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-225-04.04.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի վերնագիր, 1-ին հոդվածի 2-րդ կետ**	Հաշվի առնելով, որ 10.12.2021թ. ՀՕ-383-Ն օրենքով օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետը 2022 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2) 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ա. ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, եթե ԱԱՀ-ի գումարները վճարվել են մինչև մաքսային հայտարարագրի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ,»: Վերոնշյալ կետում կատարվող փոփոխությամբ պայմանավորված առաջարկում ենք նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է:	Ընդունվել է: Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետ**	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետում «ապրանքների» բառը փոխարինել «հումքի» բառով, քանի որ օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված դրույթները վերաբերում են միայն հումքին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի նոր 5-րդ հոդված**	ՀՀ հարկային օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված են շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չհամարվող տարրերը, որոնց մեջ ներառված են նաև մասնակիցների կողմից կատարվող ներդրումները: Միաժամանակ, հարկային օրենսդրությամբ կարգավորումներ սահմանված չեն այն դեպքերի համար, երբ հարկային	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հսկողության արդյունքներով առաջադրված հարկային պարտավորությունների մարման նպատակով գործով անցնող անձանց կողմից վճարվում են առաջադրված գումարները: Հաշվի առնելով վերոնշյալ հոդվածով սահմանված առանձնահատկությունները՝ առաջարկում ենք շահութահարկով հարկման բազան որոշելու նպատակով եկամուտ չհամարել նաև հարկային հսկողության արդյունքներով առաջադրված հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող գումարները: Ըստ այդմ նախագիծն առաջարկում ենք լրացնել նոր 5-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 5. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում «գումարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հարկային հսկողության արդյունքներով առաջադրված հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող գումարները» բառերով:»: Նշված լրացման հետ կապված առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:		
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի նոր 7-րդ և 8-րդ հոդվածներ**	Առաջարկում ենք միասնականացնել մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսային վճարների (մաքսատուրք, ԱԱՀ և ակցիզային հարկ) և հարկերի (բնապահպանական հարկ և ճանապարհային հարկ) գծով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձման և (կամ) հաշվանցման գործընթացը: Մաքսային միության մաքսային օրենսդրությունը կարգավորվող ակտերով մաքսային վճարների գծով սահմանված կարգով հաշվարկված պարտավորությունների չափից ավելի վճարված գումարների վերադարձը իրականացվում է Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) սահմանված կարգով: «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 101-րդ հոդվածով սահմանված պարտավորության չափից ավելի վճարված մաքսատուրքի և հարկերի գումարների վերադարձի (հաշվանցման) դիմումը սահմանում է Կոմիտեն: ՀՀ Ազգային ժողովում քննարկվող «Մաքսային կարգավորման մասին» օրենքի նախագծով ևս նախատեսվում է, որ այդ գումարների վերադարձը պետք է կատարվի Կոմիտեի սահմանած կարգով: Ներմուծման մասով մաքսային մարմիններին վճարման ենթակա բնապահպանական և ճանապարհային հարկի մասով կարգավորումները սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Օրենսգրքով այդ հարկատեսակների մասով ավել վճարված գումարների վերադարձի կարգը պետք է սահմանի Կառավարությունը: Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև մաքսային մարմիններին ավել վճարված բնապահպանական և ճանապարհային հարկի գումարների վերադարձի (հաշվանցման) կարգի ընդունման համար Կոմիտեին լիազորող նորմեր վերապահելու նպատակով առաջարկվում է համա-պատասխան փոփոխություն կատարել ՀՀ հարկային օրենսգրքում, սահմանելով, որ մաքսային մարմիններին ավել վճարված բնապահպանական և ճանապարհային հարկի գումարների վերադարձը ևս իրականացվում է Կոմիտեի սահմանած կարգով: Ըստ այդմ Նախագիծը առաջարկում ենք լրացնել նոր 7-րդ և 8-րդ հոդվածներով՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 7.** Օրենսգրքի 182-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասում «Կառավարության սահմանած կարգով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի» բառերը, 2) լրացնել 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Բնապահպանական հարկի՝ Օրենսգրքով սահմանված պարտավորությունների չափից ավելի մաքսային մարմիններին վճարված գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»: **Հոդված 8.** Օրենսգրքի 196-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում սահմանում է «սահմանում է Կառավարությունը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի» բառերը. 2) լրացնել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «2. Ճանապարհային հարկի՝ Օրենսգրքով սահմանված պարտավորությունների չափից ավելի մաքսային մարմիններին վճարված գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»: Նշված լրացման հետ կապված առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:		

5.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 6-րդ հոդված (լրամշակված նախագծի 9-րդ հոդված)**	Նախագիծը նոր 5-րդ հոդվածով լրացնելու հետ կապված առաջարկում ենք նախագծի 6-րդ հոդվածով (լրամշակված նախագծի 9-րդ հոդված) նախատեսել, որ լրացվող դրույթները տարածվում են 2022թ. հունվարի 1-ից ծագող հարաբերությունների նկատմամբ, ինչպես նաև նախագծի հոդվածների համարակալման վերանայման պայմանավորված ուղղել 6-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 9-րդ հոդված) 2-րդ նախադասության հղումը: Ըստ այդ Նախագծի 6-րդ հոդվածում (լրամշակված նախագծի 9-րդ հոդվածում) «կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված ներմուծումների նկատմամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «սույն օրենքի 5-րդ հոդվածը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա» բառերով, իսկ նույն հոդվածի 2-րդ նախադասությունում «5-րդ» բառը՝ «6-րդ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: